ՇԱՄԱԽԻԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԱՌԱՋՆՈՐԴԸ. ՍԱՐԳԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՏԴ 93/94
DOI: 10.56246/18294480-2024.17-18

ԷԴԻԼՅԱՆ ՀԱՅԿ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ
էլփոստ՝ haykedilyan@mail.ru

***Հոդվածում ներկայացվում է Սարգիս Համբարձումյանի կրթական և հոգևոր գործունեությունը, որը Շամախիում ձևավորված ավետարանական խմբի առաջնորդն էր: Չնայած նրան, որ արևելահայերի շրջանում ավետարանական շարժման սկզբնավորման ու տարածման օջախը համարվում է Շուշին, որտեղ 1823թ.-ից սկսել էին ակտիվ գործունեություն ծավալել Շվեյցարիայի Բազել քաղաքից եկած քարոզիչները, այդուհանդերձ, արդեն 1830-ական թթ. սկզբներից ավետարանական շարժման կենտրոնը հանդիսանում էր Շամախին: Ի տարբերություն Շուշիի, որտեղ ավետարանական գործունեությունը վերագրվում է բացառապես բազելյան քարոզիչներին և ընդգրկում է համեմատաբար կարճ ժամանակահատված, Շամախիում այն տևել է շուրջ 60 տարի և իրականացվել է գլխավորապես հայ գործիչների միջոցով: Շամախիի ավետարանական հայ գործիչների մեջ հատկապես առանձնանում է շամախեցի Սարգիս Համբարձումյանը, որի անվան հետ է կապված Շամախիում ավետարանական շարժման ողջ ընթացքը, որը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, ստանձնել էր Շամախիի ավետարանականների առաջնորդի դերը՝ հոգ տանելով նաև տեղի հայերի ինչպես հոգևոր, այնպես էլ կրթական մակարդակի բարձրացման մասին:*

Ս. Համբարձումյանի գործունեության ուսումնասիրությունը Շամախիում ավետարանական շարժման համատեքստում, լույս է սփռում նաև այն պատճառների ու նախադրյալների վրա, որոնք հող են հանդիսացել ավետարանականության՝ արևելահայերի կյանք մուտք գործելուն:

Բանալի բառեր՝ *Շամախի, Ավետարանական շարժում, Սարգիս Համբարձումյան, ուսումնարաններ, Բազելյան քարոզիչներ, բողոքականություն:*

Ս. Համբարձումյանի կյանքին և գործունեությանը վերաբերվող աղբյուրներն ու տեղեկություններն այնքան էլ շատ չեն: Համեմատաբար մանրամասն տեղեկություններ գտնում ենք Հ. Ղուկասյանցի աշխատության մեջ[1], ով տեղի ունեցող շատ

[1] Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886:

դեպքերի ականատեսն է եղել կամ տեղեկացել է տարբեր զրույցների միջոցով: Որոշակի տեղեկությունների հանդիպում ենք նաև այդ շրջանի հայկական մամուլից, որտեղ որոշ դեպքերում հոդվածների հեղինակը հենց Ս. Համբարձումյանն է, այլ հեղինակներ տեղեկություններ են տրամադրում նրա մասին՝ Շամախիում ավետարանական գործին անդրադառնալու համատեքստում: Նման հոդվածների հանդիպում ենք հատկապես «Մշակի», «Մեղու Հայաստանի», «Մուրճի», «Նոր-Դարի» և «Հյուսիսափայլի» տարբեր համարների մեջ:

Սեդրակ Թառայանի՝ «Մուրճ»-ում տպագրված «Հայ Բողոքական համայնքը» հոդվածի մեջ հեղինակը Ս. Համբարձումյանի մասին նշում է որ «Սարգիս Վարպետը Շամախու հայ բողոքականութեան հիմնադիրն է, որը մնաց առանց ամուսնանալու և իւր ամբողջ կեանքը և ժամանակը նուիրեց հայ-բողոքական համայնքի աճելուն…: Երբ մենք հարկաւոր նիւթեր ձեռք բերենք, գուցե կը կարողանանք լոյս սփռել այդ անսովորական մարդու փոքր ի շատէ մանրամասն կենսագրութեան վերայ»[1]: Նմանատիպ հիացմունքով և դրվատանքով է ներկայացնում Ս. Համբարձումյանին նաև Գասպար Ղազարյանը՝ «Ավետաբեր»-ի համարներց մեկում լույս տեսած հոդվածի մեջ. «…ուշադրութիւնս գրաւեց այս եկեղեցւոյն (Շամախի) հիմնադիրը, որ է բնիկ Հայ եղբայր մը, Սարգիս Համբարձումեան: …Այս մարդը ունեցած է անխոնջ աշխատութիւն մինչեւ այսօր, իր անձը բոլորովին արհամարած է Քրիստոսի համար, եւ կըսեն թէ զարդարուած է ամեն առաքինութեամբ…»[2]: Մեկ այլ աղբյուրի մեջ Ս. Համբարձումյանը ներկայացվում է որպես հայ լուսավորության ջատագովներից մեկը, ով նաև հոգևոր ժողովներ էր անում տների մեջ[3]: 1880-ական թթ., երբ հայ ժողովրդի մի զգալի մասը Արևմտյան Հայաստանում գտնվում էր սովահար վիճակում և կանգնած էր ցեղասպանության վտանգի առջև, լսելով այդ «սիրտ կտրտող բոթը», տարբեր ժամանակահատվածներում Ս. Համբարձումյանը ձեռնամուխ է լինում նաև Շամախու ավետարանական համայնքի միջոցով գումար հանգանակելուն և այն հայրենակիցներին փոխանցելուն[4]:

Սարգիս Համբարձումյանը ծնվել է 1808թ. Շամախիում: Նրա կապը եվրոպացի բողոքական քարոզիչների հետ եղել է դեռևս 1828թ., երբ վերջիններս ակտիվ գործունեություն էին ծավալում Շուշիում և ժամանակ առ ժամանակ դուրս էին գալիս Շուշիի սահմաններից դուրս: Քարոզիչներ Ֆելիցիան Զարեմբան և Ավգուստ Դիտրիխը Միրզա Ֆարուխի ուղեկցությամբ առաջին անգամ հենց 1828թ. եղան Շամախիում, որտեղ կապեր հաստատեցին տեղացի մի շարք մարդկանց հետ, որոնց

---

[1] Մուրճ, Թիֆլիս, 1893, N2, էջ 305:

[2] Աւետաբեր, Կոստանդնուպոլիս, 1887, Թիւ 6, էջ 46:

[3] Վեր. Աւետիս Ս. Տարագճեան, Մարզուանի հայ աւետարանական ժողովուրդը, Պրուքլին, Նիւ-Եորք, 1960, էջ 16:

[4] Մշակ, Թիֆլիս, 1880, N 48, Մարտի 22, Մշակ, 1880, N 84, Մայիսի 21, Մշակ, 1880, N 232, Դեկտեմբերի 27:

թվում էր հրացանագործ Գևորգ Համբարձումյանը, ով Սարգիս Համբարձումյանի հայրն էր[1]: 20-ամյա Ս. Համբարձումյանը մասնակցում էր քարոզիչների ժողովներին, ունկնդրում նրանց մտքերն ու գաղափարները: Առավել արդյունավետ և տպավորիչ է եղել Սարգիս Համբարձումյանի և Զարեմբայի միջև խոսակցությունը, որի արդյունքում «հոգեւորապես լուսաւորուած» երիտասարդ Սարգիս Համբարձումյանը որոշում է ուսում ստանալ քարոզիչների մոտ և շարունակել նրանց հետ համագործակցությունը[2]:

Նուխիում աշխատելու և ուսանելու տարիներին, Սարգիսը կրկին շփումներ է հաստատել բազելյան քարոզիչների հետ, որոնք, Շուշիից Շամախի այցելություններից զատ, որոշակի գործունեություն էին փորձում իրականացնել նաև Նուխիում, ինչպես նաև մերձակա այլ քաղաքներում և գյուղերում[3]:

1837թ. Սարգիս Համբարձումյանը տեղափոխվում է Շուշի, որտեղ արդեն կասեցվել էր քարոզիչների գործունեությունը, սակայն նրանցից ոմանք դեռևս գտնվում էին Շուշիում (Կարլ Պֆանդեր, Ֆրիդրիխ Շտերեմբերգ, Ֆելիցիան Զարեմբա, Ֆրիդրիխ Յուդտ)[4]: 1838թ. քարոզիչների ջանքերով 30-ամյա Ս. Համբարձումյանը ուսում ստանալու նպատակով ուղևորվում է Էստոնիա, որտեղ դիմում է գերմանացի բարոն Գրյունվալդին, ով բնակվում էր Տալինին և Դորպատին մոտ գտնվող Վեյսենշտեյն գյուղում: Երեք տարի բարոնի մոտ ուսանելուց հետո, գերմաներեն լեզվից քննություն հանձնելով և տեղի ուսումնական վարչությունից տարրական ուսումնարանի ուսուցչի իրավունք ստանալուց հետո, 1842թ. գարնանը Ս. Համբարձումյանը վերադառնում է Շամախի՝ սկսելով իր կրթական և հոգևոր գործունեությունը Շամախիում[5]: «Մշակ»-ի խմբագրին գրած նամակի մեջ Ս. Թառայանը, անդրադառնալով Ս. Համբարձումյանի կրթությանը, նշում է, որ նա երկար ժամանակ ուսում է ստացել նաև Շվեյցարիայում, սեփական վարժարան պահելու իրավունք ունենալու համար քննություններ է հանձնել նաև Բաքվի գիմնազիայում, հիանալի տիրապետել է հայերեն, ռուսերեն և գերմաներեն լեզուներին և մի շարք առարկաների[6]:

1842թ. Շամախիում Սարգիս Համբարձումյանի կողմից բացվում է ուսումնարան հայ մանուկների համար, որը գործել է մոտ 20 տարի, որտեղ սովորում էին հայերեն, թվաբանություն, գեղագրություն, ռուսերեն, ինչպես նաև Սուրբ Գիրքը, կային նաև կրոնաբարոյական թեմաներով դասաժամեր, գործում էր նաև մեծահա-

---

[1] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 40:

[2] Վեր. Եղիա Ս. Քասունի, Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման 1846-1946, Պեյրութ, Լիբանան, 1947, էջ 230:

[3] Հորիզոն, Թիֆլիս, 1916, N 172, 4 օգոստոսի: Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, Բ մաս, Նոր-Նախիջեւան, 1909, էջ 217:

[4] Միքայելյան Թ., Վերապատվելի Վահան Միքայելյանի հիշատակին, Երևան, 2015, էջ 27:

[5] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 44:

[6] Մշակ, 1882, N 119, Հուլիսի 3:

սակ աշակերտներից կազմված երգչախումբ[1]: 1842թ. օգոստոսի 14-ի՝ Կասպիական մարզի վարչության զեկուցագրում նշված էր, որ Շամախի քաղաքում գործում էր ընդամենը մեկ մասնավոր դպրոց, որն ուներ 20 աշակերտ[2]: Ս. Համբարձումյանի դպրոցում աշակերտների թիվը տարբեր տարիների հասնում էր 80-ից 100-ի՝ երբեմն հասնելով նաև 150-ի, որոնց մեծ մասը սովորում էր անվճար, մյուսները վճարում էին 50 կոպեկ ուսման վարձ յուրաքանչյուր ամսվա համար[3]:

Տեղի դպրոցական իշխանությունները բարձր են գնահատել Ս. Համբարձումյանի գործունեությունը կրթական ոլորտի մեջ: 1847թ. հունիսի 13-ին Շամախիի գավառական ուսումնարանի տեսուչը իր հաշվետվության մեջ դրական գնահատական է տվել Ս. Համբարձումյանին և նրա դպրոցին և առաջարկել է շնորհել նրան ոսկյա կամ արծաթյա մեդալ, որն այդ ժամանակ բացառիկ երևույթ էր մասնավոր ուսումնարանների տնօրենների համար[4]:

Հ. Ղուկասյանցից տեղեկանում ենք, որ հետագայում Ս. Համբարձումյանը ուսումնարան էր բացել նաև Գյուրդ (Գյուրդա) կոչվող գյուղում «իւր հասունացած աշակերտների–տիրացու Թադէոս Բուդաղէանցի և Գիւրդեցի Յովսէփի օգնությամբ», որտեղ ուսանում էր նաև Բաղդասար քահանա Տեր-Մարկոսյանի որդին, ով «վարպետին իրանց գիւղի լուսաւորիչն էր համարում»[5]: Գյուրդան Շամախու հայկական գյուղերից մեկն էր, որտեղ 1858թ. տվյալներով կար հայաբնակ 14 տուն[6]: Կրթական գործունեության ընթացքում Համբարձումյանին տևական ժամանակ նյութական օգնություն էին տրամադրում բարոններ Գրյունվալդը և Միլբախը, ինչպես նաև այդ ժամանակվա զինվորական նահանգապետ գեներալ Ալեքսանդր Վրանգելը[7]: Գերմանացի գործիչների՝ Ս. Համբարձումյանի նկատմամբ բարյացակամ վերաբերմունքը պայմանավորված էր դեռևս Եվրոպայում ուսումնառության տարիներին նրանց միջև հաստատած հարաբերություններով, որտեղ որպես միջնորդ մեծ դեր էին ունեցել Բազելից եկած քարոզիչները: Իսկ Ս. Համբարձումյանը, ըստ էության, քարոզիչների՝ Շուշիում ծավալած գործունեության շարունակողն էր Շամախիում:

Համբարձումյանի ուսումնարանը 20 տարուց ավելի հնարավորություն տվեց բազմաթիվ հայ մանուկների և պատանիների, շատ դեպքերում ամբողջովին անվճար ստանալ կրթություն, տիրապետել հատկապես հայոց լեզվին, թվաբանությանը,

---

[1] Ղազարյան Ա., Լևոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999, էջ 97:

[2] Ստեփանյան Գ., Շամախի քաղաքի հայկական դպրոցների պատմությունից (XIX դ.), Հայագիտական ուսումնասիրություններ, 7/2016, Ստեփանակերտ, 2017, էջ 57:

[3] Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964, էջ 285:

[4] Նույն տեղում:

[5] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 57:

[6] Կարապետյան Ս., Շամախու գավառի գյուղերի պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների, 1989, N 12, էջ 66:

[7] Միքայելյան Թ., նշվ. աշխ., էջ 27:

Աստվածաշնչին և հոգևոր երգեցողությանը: Հայանպաստ գործունեության արդյունքում բավականին բարձրացել էր Ս. Համբարձումյանի հեղինակությունը շամախահայերի շրջանում, ինչպես նաև մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում, որոնք տարբեր կերպ օժանդակում էին նրա կրթական գործին:

Շամախիում Ս. Համբարձումյանի գործունեությունը բավականին նմանություններ ուներ տարիներ առաջ Շուշիում հաստատված բազելյան քարոզիչների գործունեության հետ, որոնք Շուշի գալուց հետո ևս սկզբնական շրջանում ծավալել էին կրթական-լուսավորչական գործունեություն, կարողացել էին շահել ժողովրդի, տեղի հոգևորականների և իշխանությունների վստահությունը, հող նախապատրաստելով նաև իրենց հոգևոր գործունեության համար: Աշակերտներ պատրաստելու, հետագայում նրանց միջոցով այլ վայրերում ևս դպրոցներ հիմնելու գործելակերպը նույնպես եկել էր Շուշիից, որտեղ եվրոպացի քարոզիչների կողմից պատրաստված աշակերտները հաջողությամբ այլ վայրերում ևս հիմնում էին դպրոցներ, որոնցից յուրաքանչյուրն ունենում էր 20-30 աշակերտ[1]:

Կրթական գործունեության հետ մեկտեղ Ս. Համբարձումյանը կարողացել էր իր շուրջը համախմբել մարդկանց, որոնց հետ ունենում էր զրույցներ կրոնական թեմաներով, կատարում էր սուրբգրային ընթերցումներ և տալիս դրանց վերաբերյալ բացատրություններ, միաժամանակ իր աշակերտների հետ միասին հաճախում էր հայոց եկեղեցին՝ նշելով, որ իր նպատակն է միայն «երբ և ուր լինի՝ աշխարհաբար լեզուով կարդալ ս. Գիրքն և հասկացնել ունկնդիրներին»[2]: Չնայած այս հանգամանքին՝ շատերը շարունակում էին կասկածաբար վերաբերվել նրա անձին և գործունեությանը: Առաջնային պատճառներից մեկը ժամանակին Ս. Համբարձումյանի հոր՝ քարոզիչների հետ սերտ համագործակցությունն էր, ինչպես նաև քարոզիչների հովանավորությամբ և օժանդակությամբ Համբարձումյանի՝ Եվրոպայում ուսում ստանալու հանգամանքը: Մտահոգության տեղիք էր տալիս նաև նրա կողմնակիցների թվի հետզհետե ավելանալը:

1847թ. երկպառակության մեջ մեղադրվող Ս. Համբարձումյանը կանչվում է Թիֆլիս՝ Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի մոտ, որտեղ կարողանում է հերքել իրեն ուղղված բոլոր մեղադրանքները և պարգևներով հետ է վերադառնում Շամախի և շարունակում իր գործունեությունը[3]: Ներսես կաթողիկոսի այս բարյացակամ վերաբերմունքը բացատրվում է նրանով, որ վերջինս որոշակի հարաբերություններ է ունեցել բազելյան քարոզիչներից Ֆելիցիան Զարեմբայի հետ: Պետերբուրգում գտնվող նորընտիր կաթողիկոս Ներսեսին ուղղված նամակում Զարեմբան նախ շնորհավորել է նրան, ապա խնդրել չհալածել Շամախիում գտնվող Ս. Համբարձումյանին, ինչին ի պատասխան՝ Ներսես կաթողիկոսը գրում է Շամախու թեմի առաջ-

---

[1] Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց թեմական հոգեւոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914, էջ 90:

[2] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 51:

[3] Մեղու Հայաստանի, Թիֆլիս, 1873, N 44, նոյեմբերի 17:

նորդ Մատթեոս եպիսկոպոսին՝ պատվիրելով զերծ մնալ Համբարձումյանի նկատմամբ հալածանքներից, որն էլ դրական է ընդունվում Մատթեոս եպիսկոպոսի կողմից[1]:

Այդուհանդերձ, Ս. Համբարձումյանն ավելի զգուշավոր և խոհեմ կերպով էր սկսել գործել, փորձելով խուսափել հետագա դժգոհություններից ու թշնամանքից: «Մեղու Հայաստանի»-ն, որը Ս. Համբարձումյանի և, այսպես կոչված, «լյութերականության» ջերմեռանդ քննադատն էր, այնտեղ տպագրված «Հայ լուտերականութիւն Շամախում» հոդվածի մեջ հոդվածագիրը խոստովանում է, որ Ս. Համբարձումյանի մանկավարժական մեթոդները տոգորված չէին լյութերական գաղափարներով[2]:

1850-ական թթ. հայ հոգևորականությունը կրկին Ս. Համբարձումյանին մեղադրում էր լյութերական գաղափարների տարածման, հայ եկեղեցու կանոններն ու հավատամքը չպահելու, ժողովրդին մայր եկեղեցուց հեռացնելու և պառակտումներ մտցնելու մեջ: 1852թ. մայիսի 21-ին Հոգևոր գործերի դեպարտամենտին ուղղված գրության մեջ ներկայացվում են 12 կետից կազմված մեղադրանքներ Ս. Համբարձումյանի դեմ, որով վնասակար էր ճանաչվում նրա ուսուցչական և հոգևոր գործունեությունը՝ առաջարկելով փակել նրա ուսումնարանը և նշանակել քննություն[3]: Արդյունքում Էջմիածնի սինոդի հրամանով 1853թ. հունվարին Ս. Համբարձումյանի դեմ նշանակվում է քննություն՝ հայազգի մանուկներին աղանդավորական ուսմունք տալու վերաբերյալ, որը տևում է մինչև 1854թ. սեպտեմբերի 3-ը և որևէ արդյունք չի տալիս[4]: Այս ամենին զուգահեռ, անդրադառնալով Շամախու թեմի գործունեությանը, Ալ. Երիցյանը գրում է, որ բավականին խեղճ ու անբարեկարգ է Շամախու կամ Շիրվանի թեմը, որտեղ կոնսիստորիան միայն անունով գոյություն ուներ: Ոչ մի ուսումնարան չկար եկեղեցական հասույթների սակավության պատճառով, իսկ Ստեփանոս եպիսկոպոս Խաժակյանցը ծանոթ չէր ո՛չ իր հոտին, ո՛չ էլ պետական օրենքներին: Նա իր գործերը վարում էր կամայական և միայն իր հաճույքներով միչև իր պաշտոնից ազատվելը[5]: Այս ամենը եթե ոչ գլխավոր, ապա էական պատճառներից էին, որ ժողովրդից շատերը հեշտությամբ թեքվում էին ավետարանականների կողմը, թեև երբեմն նշվում էր նաև, որ այդ երևույթին նպաստում է նաև այն հանգամանքը, որ շատ հայեր հարում էին ավետարանականներին դրամական կամ նյութական պահանջմունքներից ելնելով[6]: «Նոր-Դար»-ին գրած «Բողոքականութիւնը և մեր հոգեւորականութիւնը Շամախու գաւառում» հոդվածի մեջ հոդվածա-

---

[1] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 52:

[2] Մեղու Հայաստանի, 1873, N 44, նոյեմբերի 17:

[3] ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.2779, թթ.19-20:

[4] Նույն տեղում, թթ.42-42շրջ.:

[5] Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, Մաս Բ, Թիֆլիս, 1895, էջ 477:

[6] Արձագանք, Թիֆլիս, 1894, N 59, մայիսի 25:

գիրը ևս մատնանշում է Շամախու և շրջակա գյուղերի եկեղեցիների և հոգևորականների շուրջ ստեղծված իրավիճակը, որոնք տարված են անձնական շահերով և բարեկեցության ապահովման համար պայքարով, իսկ ժողովուրդը հետևում է նրանց, ումից «աւելի սրտակից ու կարեկցող բարեկամութիւն է տեսնում, քան իւր հոգևորականից»[1]:

1858թ. հայոց կաթողիկոս էր ընտրվել Մատթեոս Ա Կոստանդնուպոլսեցին, ով դեռևս Պոլսի պատրիարք եղած ժամանակ ուխտել էր հայ ազգի մեջից բնաջինջ անել բողոքականությունը[2]: 1861թ. ապրիլի 25-ին Մատթեոս կաթողիկոսի բանադրանքի կոնդակով պատվիրվում էր Շամախու բոլոր քահանաներին, որ մոլորյալներին չթողնեն մտնել եկեղեցի և չմասնակցեն եկեղեցու սրբագործ խորհուրդներին, մինչև հաստատապես չզղջան և հետ չկանգնեն իրենց մոլորություններից[3]: Երկպառակություններն ու ընդհարումները հետզհետե ավելի հաճախակի բնույթ ստացան: Վեճերը, կրոնականից բացի, հաճախ տեղի էին ունենում կենցաղային-սոցիալական հարցերի շուրջ: «Հյուսիսափայլ»-ի մեջ հեղինակը համառոտ կերպով գրում է մի քանի դեպքերի մասին, երբ բողոքական հայերին թույլ չի տրվել հուղարկավորվել ընդհանուր գերեզմանատանը, որոնց մեջ եղել է նաև երեխա[4]: «Մեղու Հայաստանի» խմբագիրն էլ մեղադրում է Ս. Համբարձումյանին, որ նա թույլատրել է ամուսնություն մոտ ազգականների միջև[5], մինչդեռ Ղուկասյանցը նշում է, որ Ս. Համբարձումյանը, որն այդ ժամանակ, աքսորի մեջ լինելով, գտնվել է Պյատիգորսկ քաղաքում, խորհուրդ է տվել Շամախի եկող Կարլ Բլոմին չկատարել այդ պսակը, քանի որ այն հաճելի չի լինի և շատ կխորշեցնի մյուս հայերին[6]:

1863թ. եկեղեցական իշխանությունները, ի դեմս Շամախու թեմի նորանշանակ առաջնորդի, Բաքվի նահանգապետի միջոցով փակել տվեցին Համբարձումյանի ուսումնարանը[7], որից հետո շատ ջանքեր գործադրելով, բազմաթիվ դիմումներ հղելով եկեղեցական և քաղաքական տարբեր պաշտոնյաների՝ ի վերջո հաջողվեց Ս. Համբարձումյանին տանել նախ Թիֆլիս, ապա 1865թ. հունիսին նա աքսորվեց Պյատիգորսկ, որտեղ մնաց շուրջ 2 տարի[8]:

Այս ընթացքում բողոքական համայնքը շարունակում էր ակտիվ աշխատանքներ կատարել՝ նպատակ ունենալով կազմավորել առանձին եկեղեցի՝ արևմտահայ իրենց եղբայրների օրինակով, որտեղ 1846թ. հուլիսի 1-ին կազմավորվել

---

[1] Նոր-Դար, Թիֆլիս, 1898, N 45, մարտի 13:
[2] Վեր. Եղիա Ս. Քասունի, նշվ. աշխ., էջ 230:
[3] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 84-86:
[4] Հյուսիսափայլ, Մոսկվա, 1861, Չորրորդ տարեգնացք, Ամսատետր 12, էջ 481-482:
[5] Մեղու Հայաստանի, 1873, N 44, նոյեմբերի 17:
[6] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 116:
[7] Սանթրոսյան Մ., նշվ. աշխ., էջ 286:
[8] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 114:

էր Հայաստանյայց Ավետարանական եկեղեցին[1]: 1866թ. օգոստոսի 22-ին ռուսական կառավարության թույլտվությամբ նրանք իրենց ցանկությամբ պաշտոնապես մտան Մոսկվայի Ավետարանական-Լյութերական կոնսիստորիայի կազմի մեջ, իրենց գերդաստաններով հանդերձ, որի առթիվ Կարլ Բլոմը, իրենց եկեղեցու ծեսի համաձայն, կատարեց չմկրտվածների մկրտությունը, մի քանի անձանց էլ պսակադրեց[2]: Նորակազմ ավետարանական համայնքն ուներ 106 հաղորդական անդամներ[3]:

1867թ. սկզբներին բազելյան քարոզչական ընկերության առաջարկով Շամախի եկավ մեկ այլ հայտնի ավետարանական գործիչ՝ Աբրահամ Ամիրխանյանը, ում «Կովկասի լրաբեր» թերթը ներկայացնում է որպես ֆանատիկոսության (մոլեռանդության) աստիճանի հասնող կրոնական համոզումների տեր մեկի, ով Աստվածաշնչյան ընկերության հրատարակությամբ աշխարհաբար էր թարգմանել Աստվածաշունչն ու Ավետարանները, ինչպես նաև հայերեն էր թարգմանել Ղուրանը[4]: Ա. Ամիրխանյանը սկսեց կրթական և հոգևոր գործունեություն ծավալել Շամախիում: Սակայն որոշ ժամանակ անց Ս. Համբարձումյանի և Ա. Ամիրխանյանի միջև առաջացած տարաձայնությունների հետևանքով վերջինս ստիպված եղավ թողնել Շամախին:

1872թ. հունվարի 16-ի Շամախու ավերիչ երկրաշարժից հետո մեծանում է գերմանացի հոգևորականների դերը Շամախու ավետարանական համայնքի մեջ, որոնք հատկապես երկրաշարժից հետո գումարներ էին ուղարկում «Շամախու հայ լյութերականների դժբախտությունը թեթևացնելու համար»[5], ինչպես նաև գերմանացի պաստորներն էին Շամախիում բողոքական հայերի պետքերը կատարում, որոնք սկզբում գալիս էին Թիֆլիսից, հետո նաև Բաքվից[6]: Ս. Համբարձումյանի գործունեությունը բավականին սահմանափակվել էր, իսկ ազդեցությունը նվազել: 1880թ. «Մշակի» համարներից մեկում կարդում ենք, որ Շամախու բողոքական հայերից շատերը այդ շրջանում տեղափոխվել և հաստատվել էին Բաքվում[7]:

Ս. Համբարձումյանի կյանքի վերջին տարիների գործունեության մասին տեղեկությունները բավականին սուղ են: Նրա գործունեության ուշ շրջանի մասին որոշ տեղեկություններ է հաղորդում Ս. Թառայանը իր հոդվածի մեջ՝ նշելով, որ Համբարձումյանն իր ծեր տարիքում ակտիվ համագործակցում էր երիտասարդ բողոքականների հետ, որոնք Բաքվից վերադարձել էին Շամախի՝ փորձելով որոշ

---

[1] Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, Ա հատոր, Պատմութիւն Մերձ. Արեւելքի Հայ Աւետ. Միութեան, Պեյրութ, 1950, էջ 13-14:

[2] ՀԱԱ, ֆ.56, ց.1, գ.2779, թթ.139, 139շրջ.-140:

[3] Վեր. Եղիա Ս. Քասունի, նշվ. աշխ., էջ 231:

[4] Կովկասի լրաբեր, Թիֆլիս, 1913, N 41, փետրվարի 20:

[5] Մշակ, 1872, N 16, ապրիլի 27:

[6] Ղուկասեանց Հ., նշվ. աշխ., էջ 143:

[7] Մշակ, 1880, N 126, հուլիսի 22:

բարեկարգումներ կատարել ավետարանական համայնքի մեջ[1]: Ս. Համբարձումյանը մահացել է 1892թ. հունվարի 23-ին Շամախիում 83 տարեկան հասակում[2]: «Նոր-Դար»-ի տարբեր համարների մեջ կարդում ենք, որ 1890-ական թվականների վերջերին Շամախիում և շրջակա գյուղերում բողոքական գործիչները շարունակում էին իրենց գործունեությունը, նրանց գործը մեծ թափով առաջ էր գնում՝ իրենց շուրջը գրավելով մեծ թվով մարդկանց, որոնք սովորաբար շաբաթը մեկ անգամ հավաքվում էին ժողովներ անում և քարոզներ ասում[3]:

Շամախիի ավետարանական շարժումը, որի ղեկավարն ու առաջնորդը հանդիսանում էր Ս. Համբարձումյանը, եղել է այն սկզբնակետը, որտեղից այն տարածվել է ինչպես Շամախիի մի շարք հարակից գյուղերում, այնպես էլ Արևելյան Հայաստանի տարբեր վայրերում: Ս. Համբարձումյանի անձի և գործունեության վերաբերյալ գնահատականները եղել են տարբեր, որոնք կրթականից զատ առավելապես ընդգրկում են նրա հոգևոր գործունեությունը, որն անկախ դժգոհություններից և ուղղված մեղադրանքներից շարունակում էր իր ընթացքը՝ ընդգրկելով նոր սահմաններ: Տարբեր են նաև ավետարանական գաղափարների տարածման գործում Ս. Համբարձումյանի հաջողության հասնելու պատճառները, որոնցից կարելի է առանձնացնել այն, որ պարզամիտ ու մեծ մասամբ չքավոր մարդկանց համար բավականին դրական ու գրավիչ ազդեցություն էին ունենում բողոքականների սիրալիր և բարյացակամ վերաբերմունքը նրանց նկատմամբ, ինչպես նաև նրանց երբեմն տրվող նյութական օգնությունները, սրան զուգահեռ տեղի հայ հոգևորականների՝ երբեմն անգործության մատնված լինելու հանգամանքը և նրանց վստահված համայնքի հոգևոր և նյութական կարիքներին շատ հաճախ հաղորդակից չլինելը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Աւետաբեր», Կոստանդնուպոլիս, 1887, Թիւ 6:
2. «Արձագանք», Թիֆլիս, 1894, N 59:
3. Երիցեանց Ա., Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կովկասի Հայք XIX դարում, Մաս Բ, Թիֆլիս, 1895:
4. Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, Բ մաս, Նոր-Նախիջեւան, 1909:
5. Լէօ, Պատմութիւն Ղարաբաղի Հայոց հոգեւոր դպրոցի 1838-1913, Թիֆլիզ, 1914:
6. «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, N 12, Կարապետյան Ս., Շամախու գավառի պատմությունից:

[1] «Մուրճ, 1893, N 2, էջ 306-308:

[2] «Նոր-Դար, 1892, N 16, հունվարի 30:

[3] «Նոր-Դար, 1890, N 141, սեպտեմբերի 20, 1896, N 103, հունիսի 12, 1898, N 45, մարտի 13, N 76, մայիսի 6, N 87, մայիսի 22:

7. Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, Ա հատոր, Պատմութիւն Մերձ. Արեւելքի Հայ Ավետ. Միութեան:
8. «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1913, N 41:
9. ՀԱԱ, ֆ. 56, ց. 1, գ. 2779, թթ.19-20, թթ.42-42շրջ., թթ.139,139շրջ.- 140:
10. «Հորիզոն», Թիֆլիս, 1916, N 172:
11. «Հյուսիսափայլ», Մոսկվա, 1861, Չորրորդ տարեգնացք, Ամսատետրակ 12:
12. Ղազարյան Ա, Լևոնյան Ռ., Հայաստանյայց Ավետարանական Եկեղեցի (Հայաստան-Կովկաս), Երևան, 1999:
13. Ղուկասեանց Հ., Բողոքականութիւն Կովկասու հայոց մէջ, Թիֆլիս, 1886:
14. «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1873, N 44:
15. Միքայելյան Թ., Վերապատվելի Վահան Միքայելյանի հիշատակին, Երևան, 2015:
16. «Մշակ», Թիֆլիս, 1872, N 16, 1880, N 48, N 84, N 119, N 126, N 232:
17. «Մուրճ», Թիֆլիս, 1893, N 2:
18. «Նոր-Դար», Թիֆլիս, 1890, N 41, 1892, N 16, 1896, N 103, 1898, N 45, N 76, N 87:
19. Սանթրոսյան Մ., Արևելահայ դպրոցը XIX դարի առաջին կեսին, Երևան, 1964:
20. Ստեփանյան Գ., Շամախի քաղաքի հայկական դպրոցների պատմությունից (XIX դ.), Հայագիտական ուսումնասիրություններ, 7/2016, Ստեփանակերտ, 2017:
21. Վեր. Աւետիս Ս. Տարագճեան, Մարզուանի Հայ աւետարանական ժողովուրդը, Պրուքլին, Նիւ-Եորք, 1960:
22. Վեր. Եղիա Քասունի, Լուսաշաւիղ, Պատմութիւն Հայ Աւետարանական շարժման 1846-1946, Պեյրութ, Լիբանան, 1947:

THE EVANGELICAL LEADER OF SHAMAKHI: SARGIS HAMBARDZUMYAN

EDILYAN HAYK
Post-graduate student,
Institute of History, NASRA
e-mail: haykedilyan@mail.ru

The article presents the educational and spiritual activities of Sargis Hambardzumyan, who was the leader of the evangelical group formed in Shamakhi. Despite the fact that Shushi is considered the center of the initiation and spread of the evangelical movement among the Eastern Armenians, where the preachers from the city of Basel, Switzerland, had begun to carry out active activities since 1823, Shamakhi was the center of the evangelical movement from the beginning of the 1830s. Unlike Shushi, where

evangelical activity is attributed exclusively to Basel preachers and covers a relatively short period of time, in Shamakhi it has lasted for about 60 years and was carried out mainly through Armenian figures. Among the evangelical Armenian figures of Shamakhi, Sargis Hambardzumyan stands out, whose name is associated with the entire course of the evangelical movement in Shamakhi, who, being dedicated and faithful to his mission, assumed the role of the leader of the evangelicals of Shamakhi, taking care of raising both the spiritual and educational level of the local Armenians.

The study of Sargis Hambardzumyan's activity in the context of the evangelical movement in Shamakhi also sheds light on the reasons and prerequisites that were the grounds for evangelism to enter the lives of Eastern Armenians.

Keywords: *Shamakhi, Evangelical Movement, Sargis Hambardzumyan, educational institutions, Basel preachers, Protestantism.*

ЕВАНГЕЛЬСКИЙ ЛИДЕР ШЕМАХИ: САРГИС АМБАРЦУМЯН

ЭДИЛЯН ГАЙК
Соискатель Института истории НАН РА
электронная почта: haykedilyan@mail.ru

В статье представлена образовательная и духовная деятельность Саргиса Амбарцумяна, который был лидером евангелической группы, сформированной в Шемахи. Несмотря на то, что Шуши считается центром зарождения и распространения евангелического движения среди восточных армян, где в 1823 году начали активную деятельность проповедники из города Базел, Швейцария, Шемахи был центром евангелического движения с начала 1830-х годов. В отличие от Шуши, где евангелическая деятельность приписывается исключительно базельским проповедникам и охватывает сравнительно небольшой период времени, в Шемахе она продолжалась около 60 лет и осуществлялась преимущественно через армянских деятелей. Среди евангелических армянских деятелей Шемахи выделяется Саргис Амбарцумян, с именем которого связан весь ход евангелического движения в Шемахе, который, будучи преданным и верным своей миссии, взял на себя роль лидера евангелистов Шемахи, заботясь также о повышении духовного и образовательного уровня местных армян.

Изучение деятельности С. Амбарцумяна в контексте евангелического движения в Шемахе также проливает свет на причины и предпосылки, которые послужили основой для проникновения евангелизма в жизнь восточных армян.

Ключевые слова: *Шемахи, евангелическое движение, Саргис Амбарцумян, учебное заведение, Базельские проповедники, протестантизм.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 07.09.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 16.09.2024թ.:
Ընդունվել է տպագրության 30.11.2024թ.